ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

2023 ԹՎԱԿԱՆԻ «ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՆԵՐԱԶԴՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՐՏԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ) ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2023 թ. հունվարի 04-ին ժամը՝ 15.00-ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Զարա Ասլանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)

Մասնակցում էին՝

Մարիանա Մինասյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Ռեգինա Առաքելյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Նարեկ Առաքելյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Վերոնիկա Խորասանյան /հեռավար/ - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում
2. Դրամաշնորհային մրցույթի հրավերի տեքստում փոփոխություն կատարելու մասին քննարկում
3. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում

1) Օրակարգի 1-ին հարց

Հանձնաժողովի նախագահ Արթուր Մարտիրոսյանը, արձակուրդում լինելու և հասանելի չլինելու հանգամանքով պայմանավորված, բացակայել է նիստից: Այս փաստի հաշվառմամբ նիստը նախագահել է

ԿԳՄՍՆ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխ Զարա Ասլանյանը:
Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ ԿԳՄՍՆ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ Վերոնիկա Խորասանյանը նիստին մասնակցել է հեռավար:
Հանձնաժողովի նիստին ներկա անդամներն արձանագրել են ներկայացված տեղեկատվությունը և ընդունել ի գիտություն: Այնուհետև Զարա Ասլանյանը ներկայացրել է հանձնաժողովի նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.
1.1 Հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը:
Կողմ 4, դեմ 0

2) Օրակարգի 2-րդ հարց
Զարա Ասլանյանը ներկայացրել է, որ հանձնաժողովի 2022թ. դեկտեմբերի 28-ի N1 նիստի ընթացքում դրամաշնորհի հատկացման մրցույթի հաստատված հրավերի տեքստում տեխնիկական վրիպակ է արձանագրվել: Մասնավորապես, ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/23 ծածկագրով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի հրավերի տեքստում հայտերի ներկայացման վերջնաժամկետ և հայտերի բացման օր է նշվել «**2022թ**. հունվարի 18» «**2023թ**. հունվարի 18»-ի փոխարեն:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.
2.1 Հաստատել դրամաշնորհային մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը (կցվում են):
2.2 Դրամաշնորհային մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը վերբեռնել Armeps համակարգ և հրապարակել ՀՀ ԿԳՄՍՆ պաշտոնական կայքէջում:
Կողմ 4, դեմ 0

3) Օրակարգի 3-րդ հարց
Զարա Ասլանյանն առաջարկել է դրամաշնորհային մրցույթին հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2023թ. հունվարի 23-ը՝ ժամը 10.00՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 23-րդ կետը:
Օրակարգի 3-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.
3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստի օր սահմանել 2023 թվականի հունվարի 23-ը՝ ժամը 10:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 1-ին մասնաշենքի 605 սենյակում՝ հասցե՝ Վազգեն Սարգսյան 3:
Կողմ 4, դեմ 0

Զարա Ասլանյան

Մարիանա Մինասյան

Ռեգինա Առաքելյան

Նարեկ Առաքելյան

Վերոնիկա Խորասանյան